Ընդունված է՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

"21" 06 2001 թ.

ԵՊՀ ռեկտոր, ակադեմիկոս՝ Ռ. Մարտիրոսյան

Գիտ. քարտուղար՝ Հ. Ավետիսյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1.Ընդհանուր դրույթներ

1.1 ԵՊՀ Ուսանողական Գիտական Ընկերությունը (այսուհետ Ընկերություն) ԵՊՀ ուսանողներին և ասպիրանտներին միավորող համալսարանական ստորաբաժանում է, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

1.2 Ընկերությունը գործում է ԵՊՀ Կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Ընկերության կանոնադրությունը և նրա մեջ կատարվող փոփոխությունները հաստատվում են ԵՊՀ Գիտական խորհրդի կողմից՝ուսանողական բաժնի ներկայացմամբ:

1.4 Ընկերությունը, սահմանված կարգով, կարող է ունենալ կլոր կնիք, անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ:

1.5 Ընկերությունը իր հարաբերությունները ԵՊՀ ղեկավար մարմինների հետ կարգավորում է ԵՊՀ Կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և ԵՊՀ Գիտական խորհրդի համապատասխան որոշումներով:

1.6 Ընկերությունը իր նպատակների և խնդիրների լուծման, երկարաժամկետ ծրագրերի իրականացման համար համագործակցում է Ուսումնական վարչության ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի, Միացյալ արհմիության, Ուսանողական խորհրդի և այլ կազմակերպությունների հետ՝ ելնելով փոխօգնության, փոխշահավետության և համապատասխան պայմանագրերից ու համաձայնագրերից:

1.7 Ընկերության անվանումն է ռուսերեն՝ Студенческое Научное Общество, անգլերեն՝ Student Scientific Society: Իսկ կարճ անվանումները հայերեն՝ ՈՒԳԸ, ռուսերեն՝ СНО, անգլերեն՝ SSS:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Ընկերության նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

2.2 Ընկերության խնդիրներն ու գործունեության հիմնական ուղղություններն են.

- գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում և իրականացում,
- ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ գիտական և կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում՝ դրանցում ընգրկելով նաև արտահամալսարանական գիտական ներուժը,
- համալսարանական երիտասարդական գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում և դրա մասին ինֆորմացիայի համակարգում,
- համակողմանի աջակցության ապահովում շնորհաշատ ուսանողներին և ասպիրանտներին,
- գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկում,
- ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում,
- այլ գիտական կենտրոնների հետ կապի հաստատում և տեղեկատվության փոխանակում:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ և ղեկավար մարմինները

Ա.ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ընկերության կառուցվածքային սկզբնական օղակները ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններն են, որոնք ձևավորվում են ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված առնվազն երկու ուսանողներից կամ ասպիրանտներից: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են ՈՒԳԸ-ի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:

3.2 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի առաջադրմամբ ֆակուլտետի խորհուրդը հաստատում է ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահի, քարտուղարի թեկնածությունները, որոնք կազմակերպում են ֆակուլտետի ՈՒԳԸ-ի աշխատանքները, համակարգում են նրա հանձնախմբերի աշխատանքները, ներկայացնում ֆակուլտետի ՈՒԳԸ-ն և նրա ծրագրերը համալսարանի ՈՒԳԸ Գիտական խորհրդում:

3.3 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը 1 անգամ: Նիստերը հրավիրվում են նախագահի կողմից, կամ անդամների 1/3-ի պահանջով: Նիստը օրինական է, եթե նրան մասնակցում են անդամների ավելի քան 1/2-ը, իսկ որոշումները ընդունվում են անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է մշակել իր կանոնակարգը և սահմանել սույն կանոնադրությանը չհակասող այլ կառուցվածքային միավորներ:

3.4 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահը հանդիսանում է ֆակուլտետի խորհրդի անդամ, ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական խորհրդի անդամ:

3.5 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է կյանքի կոչել տարբեր և բազմաբնույթ ակումբներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել Ֆակուլտետի այլ ուսանողներ ևս:

Բ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

3.6 ԵՊՀ Ուսանողական Գիտական Ընկերության ղեկավար մարմինը Ուսանողական Գիտական Ընկերության Գիտական Խորհուրդն է, որի նիստը գումարվում է ուսումնական կիսամյակում ոչ պակաս քան երկու անգամ:

3.7 ՈՒԳԸ-ի Գիտական խորհուրդի կազմի մեջ մտնում են ՈՒԳԸ նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, ֆակուլտետային ՈՒԳԸ-ների նախագահները:

3.8 ՈՒԳԸ գիտական խորհուրդը՝

- քննարկում և որոշում է ՈՒԳԸ-ի գործունեության կարևորագույն ուղղությունները, միջոցներ է ձեռնարկում որոշումների իրականացման համար,
- առաջարկություններ է ներկայացնում ԵՊՀ Գիտական խորհրդին, ուսանողական բաժնին,
- ի գիտություն է ընդունում ՈՒԳ Ը նախագահի տարեկան հաժվետվությունը,
- մշակում է ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում է և կոորդինացնում ֆակուլտետային ՈՒԳԸ-ների աշխատանքները և ծրագրերը,
- հաստատում է իր աշխատակարգը,
- ստեղծում, վերակազմավորում և լուծարում է սույն կանոնադրությամբ չսահմանված ՈՒԳԸ աշխատանքային օղակները, ինչպես նաև հաստատում է նրանց կազմը և աշխատակարգը, ընդ որում նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերվող որոշ հարցերի լուծման իրավունք,
- որոշում է ընդունում շնորհել ընկերության պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է ընկերության անդամությանը վերաբերվող այլ հարցեր,
- վավերացնում է ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը,

3.9 ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական խորհրդի նիստը օրինական է, եթե նրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի ավելի քան 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: Գիտական խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել ՈՒԳԸ նախագահի, գիտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:

Գ. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

3.10 Ուսանողական Գիտական ընկերության նախագահը հաստատվում է ԵՊՀ Գիտական խորհրդի կողմից, երեք տարի ժամանակով՝ ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ,

3.11Նախագահի տեղակալին և քարտուղարին, մեկամսյա ժամանակահատվածում, ԵՊՀ ռեկտորատի հաստատմանն է ներկայացնում ՈՒԳԸ նախագահը՝ ուսանողական բաժնի երաշխավորությամբ,

3.12 ՈՒԳԸ-ը նախագահը ի պաշտոնե հանդիսանում է ԵՊՀ Գիտական խորհրդի անդամ,

3.13 ՈՒԳԸ Գիտական խորհրդի անդամներ են հանդիսանում ֆակուլտետային ՈՒԳԸ-ը ստորաբաժանումների նախագահները,

3.14 Ընկերության նախագահը ի պաշտոնե ներկայացնում է ընկերությունը, համակարգում է ընկերության գիտական խորհրդի գործունեությունը, ապահովում է ընկերության կառուցվածքային միավորների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, ընկերության անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր:

3.15 ՈՒԳԸ նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս ԵՊՀ Գիտական խորհրդում:

3.16 Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում՝ ստանձնում է նրա լիազորությունները, համակարգում է քարտուղարության աշխատանքները և ՈՒԳԸ Գիտական խորհրդի կողմից ստեղծված աշխատանքային օղակների գործունեությունը, հանդես է գալիս կատարած աշխատանքների մասին հաղորդմամբ:

3.17 Ընկերության քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները՝ առաջնորդվելով ՈՒԳԸ Գիտական խորհրդի աշխատակարգով:

4. Ընկերության միջոցները և դրանց օգտագործման կարգը

4.1 Ընկերության միջոցները գոյանում են ԵՊՀ բյուջեից կատարվող մասհանումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից, ԵՊՀ օրինադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

4.2 Ընկերությունը անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է ԵՊՀ տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

4.3 Ընկերության միջոցները օգտագործվում են կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

5. Ընկերության գործունեության դադարեցման կարգը

5.1.Ընկերությունը իր գործունեությունը դադարեցնում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2.Ընկերության լուծարումից հետո նրա ամբողջ գույքը և միջոցները պատկանում են Երևանի Պետական Համալսարանին:

Ընկերության հասցեն՝
Հայաստանի Հանրապետություն,
375025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1,
Երևանի Պետական Համալսարան